ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հունվարի 2025թ. N ՄՈ/40 -Ա

ք. Արմավիր

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԵՏԱ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարետա Սամվելյանի 2025 թվականի հունվարի 7-ի դիմումը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարետա Սամվելյանին հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2025 թվականի հունվարի 17-ից 31-ը ներառյալ՝ 10 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Մարետա Սամվելյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արուսյակ Ադամյանին:
3. «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արուսյակ Ադամյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հունվարի 17-ից 31-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարետա Սամվելյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի փետրվարի 3-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-01-13 09:26:57 GMT+4
Հավաստված է թվային ստորագրությամբ

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**